

յաջորդող ոսանաւորում «Իտական փրկութեան» որի մասին չկայ սակայն ոչինչ նշանակուած: ուրեմն և պիտի լինի ինքնուրոյն և ոչ հետևութիւն: * Մինչդեռ բանաստեղծը այնքան էլ խուսկ բուրոզ երգիչներից չէ. բաւական է օրինակի համար յիշել Նե Մրուսը, ստղանդով գրուած Արեգան (130), չարածճի և՛ ներուի ասել՝ փողոցային Չառպագանի Տերուղիան» (284) ևն: Ասուեմնասիրութիւնը աղբիւրների՝ որոնց կնթարկուել, կամ հետեւի և նմանուել է բանաստեղծը, առաջին պայմաններից մէկն է նրա ստղանդի չափը և որակը լաւ կշռելու համար: Բայց այս մասին մեր դիտեցածը շատ չնչին է: Որինակ՝ որչափ հետաքրքրական կլինէր իմանալ Մեկնից շատ առաջի այդ մարդարտաշար, պատկերաւոր, գեղեցիկ երկատղաններով բալլադի նախասարկը, որի նմանութիւնը առանց երկրայութեան բանաստեղծի լաւագոյն արտադրութիւններից մէկն է: Արձան կանդնիցնէլ բանաստեղծին անշուշտ շատ գեղեցիկ և դոկլի ձեռնարկ է, բայց լաւագոյն արձանը կլինի՝ նրա զրուածքների ամբողջական հրատարակութիւնը, մանրամասն և բարեխիղճ ուսուեմնասիրութիւնը և յաջող հատուածների ժողովրդական էժանագին հրատարակութիւնը: Այդ բանին ամենափոքր չափով նպաստելու համար՝ մասնացոյց կաննք Բերանժէի Hâtons nous մի երգը, և սրա հետևութիւն Պատկանեանի խրոխտ և այնքան ժողովրդական Թէ իմ ալեորը: Վեռ շատ սարկներ առաջ պատահմամբ նկատել էինք մենք այս կետում Պատկանեանի կախումը Բերանժէից, թէ և չէ կարելի պնդել, որ մեր բանաստեղծը անպատմառ Ֆրանսերէն բնագիրն է ունեցել աչքի տալով: Շատ հաւանական է, որ նա օգտուել է որ և է թարգմանութիւնից (սուսերէն կամ գերմաներէն), որ զեռ աւելի ևս մերձաւոր նմանութիւններ կարող է ունենալ մեր Թէ իմ ալեորի հետ: Բերանժէի երգը գրուած է 1831-ին, մի ժամանակ, երբ Ֆրանսիացիները ջերմ համակրում էին Վհհայնիներին: Անցած զնացած

բաներ: Այժմ նրանց համակրութիւնը յայտնի է որ ամբողջովին Ռուսների կողմն է: Պատկանեանի Թէ իմ ալեորը գրուած է 1862-ին: Գալուս Տե Միքսեան

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

Ստորեկեայ Հոովմ.—Այս տարի նոյեմբերի 12-ին պրոֆ. Ն. Ա. Պոկրովսկին մի հետաքրքրական դասախօսութիւն է կարդացել «ստորերկրեայ Հոովմի» այսինքն առաջին քրիստոնեաների գերեզմանոցների կամ կատակոմբների մասին, որ աղպուած է «Новостн» լրագրի 316 համարում:

Այժմայն Հոովմում, այլ և Իտալիայի ուրիշ մասերում, Եգիպտոսում, նոյն իսկ մեզանում, Ղրիմում աճէ տարի ի նորոյ նախնի քրիստոնեաների ապաստանարաններ են բացուում: Հոովմի շուրջը վաթսուէ կատակոմբներ են գտնուած, և զեռ որքան անյայտ են մնում՝ քաղաքի շինութիւնների տակ, Հոովմի մեծ մասը կատակոմբների վերայ է շինուած, Այրեր, մեռելներին թաղելու համար՝ քրիստոնեական ժամանակից առաջ հեթանոսներն էլ են ունեցել, Բայց այն ժամանակ կատակոմբները խիստ առանձնացած էին, շինուած էին սարերի փեշի վերայ և պատկանում էին ուսանձին առանձին ընտանիքների, որով քրիստոնեական կատակոմբներից աչքի ընկնող տարբերութիւն ունէին: Աերջինները համայնական ընաւորութիւն ունէին և ամբողջ քաղաք էին կազմում:

Վենդանի քրիստոնեական համայնքը չէր մոռանում և իւր մեծած անդամներին՝ նոցա թաղման համար ընդհանուր տեղ տալով: Առաջին եկեղեցին աշխարհային օրէնքներ չուներ և բոլոր հաւատացեալների վերայ հաւասար աչքով էր նայում: Բոլոր քրիստոնեաների համար, մինչև Դ. դարը, կատակոմբները պատսպարան էին և տաճար: Բայց երբ քրիստոնեութիւնը յաղթանակեց, «դուրս եկաւ գետնի տակից»՝ այդ մտայլ, խոնար լարիւրինթոսներն էլ երկար ժամանակ մոռացութեան տրուեցան, և համարեա թէ ոչ որ չէր այցելում այդ տեղերը: Առաջին անգամ միայն 1576 թուին բանուորները պատահմամբ ստորերկրեայ գերեզմանների հանդիպեցան:

Այդ ժամանակ էր, որ նշանաւոր իտալացի Բողիոնը առաջին անգամ կատակոմբների նկարագրութիւնն արաւ՝ ներկայումս արդէն կատակոմբները բաւականաչափ հետազօտուած են, կատակոմբներ մաննիխ մարդիկ սովորաբար գնում են նեղ և մութ սանդուղքով. յաճախ մուտքը

* Այդ ոգու գրուածներինցն է ևս «Ասուեմնածին Պատկանեան» (71), արդեօք նմանութիւն:

ներկայացնում է մի փառաւոր հրապարակ, որպիսին օրինակ Դոմիցիլլայի կատակումքինն է. իսկ նոցա ներքին մասը իրար հետ հիւսուած նեղ միջանցքների մի ցանցն է ներկայացնում. այս ասակ են Վալլիստոսի, Եկնիի և ուրիշ կատակումքների. Այդ միջանցքները 1—5 յարկանի են, (որոնցից վերջին յարկերը՝ աննկատելի կերպով իջնող անցքերի պատճառով, կրթման դժուար է սրոշել) և լուսաւորում են կամարի միջից եկած լոյսով:

Այդ միջանցքները մէկ արշիւնից մինչև երկու սաժին բարձրութիւն ունին:

—Ապա դասախօսը գալիս է նկարագրելու կատակումքների ներքի մասը, Մեռեւների մարմինները լուսանում էին և կտաւի մէջ փաթածում ու դնում պատերի խոռոչներում, յետոյ ծածկում տախտակներով. տախտակների վերայ գրում էին զանազան արձանագրութիւններ, ու նկարում սիմվոլիքական պատկերներ: Երկար միջանցքները բաժանող ճանապարհի վերայ կային տարբեր մեծութիւն ունեցող բնակարաններ՝ կարիկուներ (սեղաններ), կրիպտաներ (մատուռներ), որոնց դասը անբաժան է ժողովրդի մասից, և կուպէլներ (ընդարձակ եկեղեցիներ), սոքա բոլորն էլ միացած էին պատերի խոռոչների հետ, որոնց մէջ մինչև այսօր մեռելների սկզբներ են գտնուում: Սեղանների տեղը բռնում էին այս եկեղեցիներում, սովորաբար, նահատակների գերեզմանները, Վատակումքներն ուսումնասիրելիս առանձնապէս ուշադրութիւն գրաւողը պատերի վերայ եղած պատկերներն են, որոնց մէջ առաջին երկու դարերից շատ քիչ բան է մնացել, հետեւեալ պատճառներով. քրիստոնեաները վախենում էին, որ այդ պատկերները նորամուտների և թերահաւատների համար գայթակղութեան քար կլինեն, և առիթ կտան նոցա կրկին անգամ հեթանոսութեան դիմելուն. սակզագործութեան գաղափարն էլ դեռ նկարողների հոգու մէջ չէր արմատացել ու ներքին բովանդակութիւն չէր ստացել. քրիստոնեաների մէջ կային նաև պատկերազրութեան թշնամիներ: Չնայած այս բոլորին, առաջին դարուց մնացած պատկերազրութեան և կենդանազրութեան յիշատակներ են պահուել:

Այդ պատկերազրութեանց մէջ աչքի են ընկնում զանազան սիմվոլներ, որոնք նախկին քրիստոնեաների հասկացողութիւնները և հայեացքներն են ցոյց տալիս. այսպէս օրինակ, խարխիւր քրիստոնէական յուսոյ նշան է. աղանիւն, ծառի ծիւղ բռնած կտուցի մէջ՝ խաղաղութեան նշան է. գոյութիւն չունեցող Ֆլնիքս թռչունը անմահութեան նշան է. արդաղը—արթնութեան նշան է՝ պատրաստ և արթուն մնալու վերջին դատաստանի համար. գառը Յիսուսի նշանն է, իսկ առաջին երեք դարերում չի պատահում: Առասպելական Որփեւոր ընձենու մորթի մէջ փաթածուած իւր քնարն


է ածում, իսկ նորան վայրենի կենդանիներն են շրջապատել ու լսում երաժշտութիւնը, — սա Քրիստոսի նշանն է, երբ իւր շուրջը հաւարուած ժողովրդին քարոզում էր:

Սիմվոլների միւս դասին են պատկանում նոքա, որոնք Քրիստոսի առակների բովանդակութիւնն են տալիս. ինչպէս օրինակ, քաջ հովուի առակը՝ մի երիտասարդ, որ ուսերի վերայ ունար է գրել:

Եւեոյ պատահում են Ս. Կրքից հանած վանաղան պատկերներ, որոնք պարապորդներին զրաղեցնելու և փողոցային տեսարաններից հեռի պահելու համար էին: Աչքի է ընկնում իւր տարբերակութեամբ այս պատկերը. մի մարդ կանգնած է, իսկ շաշակին ունի մի ձուկ և մի զամբիւղ հաց, սա էլ Քրիստոսի և հացի բեկման խորհրդի նշանն է: Ըսկ այսպիսի նշանագրութիւնից, ասում է յարգելի դասախօսը, սկսուեց քրիստոնէական արուեստը, որ ժամանակի ընթացքում հասաւ մեր ժամանակակից բարձր գեղարուեստական ձևերին:

Յարգելի պրոֆեսորը դասախօսութեան ընթացքում ցոյց է տուել մի շարք պատկերներ՝ կատակումքների շինութեան ձևը և սիմվոլիքական պատկերների տեսքը աւելի պարզելու համար:

Եզ. ս.



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ս

Գ Ի Դ Գ Թ — Դ Ե Ն Ա Ճ Է Ը Դ Թ Ե Ի Կ, Դ Ե Ը Դ Ն Տ Ո Ն Դ Ի Յ

1. Գրիգոր Բաթիկի մասին՝ Աղեքեան, Լամբան Թայմաուտի, Օրբեհան, Կիւրխոս, Սամաէկ Անեցի, Ասղիկ:
2. Յիզբարուցի վիսյարանդիւնը Գրիգորի մասին. Անհասկալութեան ճեղք. Նիխուսկան, Կահապեա և Քնարիկ մարզպաններ: Յիզբարուցի Անհասկալութեան միջք քուսկանը—553, Անյետի, 9. Յիզբարուցի վիսյարան և նրա ընկերակից ներսու Բաթիկը: 3. ներսու Բ-ի քուրքը. յանուն Բաթիկի վանք Դուրեւում 547—8 քուրք:
4. Մանանիք—Գրիգորի նորացուց վիսյարանդիւն, Անհասկալութեան քուսկանը—545—6 քուրք, Միւրսան սոսի. Երուանց Վշեմսպ Վրաց մարզպան, Մանանիքի իշխանութիւն և ընդունում Վրաստանում, Անհասկալութեան և արտանի գրանք:
5. Դուրեւան ժամանակի յեանդեան նշաններ. Որդի Որդի—Որդի Կատասայ, կրով սակեկ: